ԱԳՐՈ Լրատու

ՄԱՅԻՍ 5 - 16 2017 Թ. ԹԻՎ 11 (2132)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Խաղողագործության միության նախագահը ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է «Հայաստանի խաղողագործության միություն» հասարակական կազմակերպության նախագահ Արտակ Սարգսյանին: Հանդիպմանը մասնակցում էին նաև նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար Զարուհի Մուրադյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են խաղողագործության միության և հիմնադրամի միջև համագործակցության հնարավորությունները՝ ոլորտի զարգացման և առկա խնդիրները համատեղ ջանքերով կարգավորելու նպատակով: ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը մասնավորապես առաջարկել է Հայաստանի խաղողագործության միությունն ընդգրկել հիմնադրամի խորհրդի կազմում: Իր խոսքում ՀՀ գյուղատնտեսության նախարարը կարևորել է խաղողագործության զարգացման գործում հասարակական հատվածի սերտ համագործակցության անհրաժեշտությունը: «Այսօր մենք պետք է փորձենք գտնել երկուստեք արդյունավետ լուծումներ և' մթերողի, և' խաղողագործի համար»,- նշել է Իգնատի Առաքելյանը:

Հանդիպման ընթացքում մասնավորապես անդրադարձ է կատարվել ֆիլոքսերակայուն տնկիների պահանջարկի ձևավորման, մթերման գործընթացի կանոնակարգման, մթերման մինիմալ գնի սահմանման, ուսուցողական դասընթացների և խորհրդատվական ծառայությունների կազմակերպման և այլ հարցերի շուրջ համագործակցության հարցերին:

Քննարկվել են անասնաբուժության ոլորտին առնչվող խնդիրները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է «Համաշխարհային անասնաբուժական ասոցիացիայի» նախկին նախագահ Տժերտ Ջորնանին և «Եվրոպայի անասնաբույժների ֆեդերացիայի» քարտուղար Յան Վարտենին: Հանդիպմանը ներկա էր նաև Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի (CARD) տնօրեն Գագիկ Սարդարյանը:

Հանդիպման սկզբում հյուրերը տեղեկացրել են, որ CARD հիմնադրամը, Ավստրիայի զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Կենդանիների առողջության կառավարում» ծրագրի շրջանակներում, նախատեսում է հիմնել անասնաբուժական ասոցիացիա, որի նպատակն է՝ հանրապետությունում զարգացնել անասնաբուժական մասնավոր բիզնեսը:

Նրանք նշել են, որ Հայաստան կատարած այցի նպատակն է՝ տրամադրել խորհրդատվություն անասնաբուժական ասոցիացիայի հիմնման վերաբերյալ: Խորհրդատուները մի շարք հանդիպումներ են անցկացնելու հանրապետության տարբեր կառույցների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ: «Անասնաբուժությունը գյուղատնտեսության ոլորտի կարևոր ճյուղերից է, որը մշտական վերահսկման և մոնիթորինգի կարիք ունի: Այս հարցում մենք բարձր ենք գնահատում ձեր փորձը, և հուսով ենք, որ այն մեզ համար օգտակար կլինի: Մենք մեր կողմից պատրաստ ենք աջակցություն ցուցաբերել ձեզ Հայաստանում նախատեսվող նախաձեռնություններում»,- ողջունելով հյուրերին՝ նշել է նախարար Իգնատի Առաքելյանը:

Այնուհետև զրուցակիցները քննարկել են Հայաստանի անասնաբուժության ոլորտի առաջնահերթ խնդիրները, դրանց լուծման հնարավոր ուղիները: Աշխատանքներին առավել արդյունավետ իրականացնելու նպատակով նախարարը հորդորել է հյուրերին՝ որպես վերահսկող մարմին, սերտորեն համագործակցել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հետ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել անասնաբուժության ոլորտին առնչվող, այդ թվում՝ պետության և մասնավոր հատվածի համագործակցությանը, գյուղատնտեսական կենդանիների հաշվառմանը և համարակալմանը վերաբերող հարցերին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Կարեն Կարապետյանի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում քննարկվել են Արմավիրի և Վայոց ձորի մարզերի համայնքների հնգամյա զարգացման լավագույն ծրագրերը:

Կառավարության ղեկավարին ներկայացվել են ձեռնարկատիրական բնույթի զարգացման տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են աղբի վերամշակման գործարանի և ջերմոցային տնտեսության կառուցմանը, այգեգործական տնտեսության զարգացմանը, խաղուն գինու արտադրության խթանմանը, խտանյութերի և պահածոների արտադրության համալիր գործարանի հիմնմանը և այլն: Համայնքների ղեկավարներն անդրադարձել են նաև համայնքների սեփական եկամուտների ավելացման ծրագրերին և այդ ուղղությամբ նախատեսված քայլերին:

Ի թիվս մի շարք ծրագրերի՝ Արմավիրի փոխքաղաքապետը ներկայացրել է նաև քաղաքում աղբի վերամշակման գործարանի կառուցման ծրագիրը և նշել, որ նախագիծն ամբողջովին պատրաստ է, ծրագրի ընդհանուր արժեքը 65.0 մլն եվրո է, այն իրականացվելու է 3 փուլով: Առաջին փուլում նախատեսվում է 70 աշխատատեղի ստեղծում, ակնկալվում է, որ գործարանը տարեկան կընդունի 200 հազար տոննա աղբ: Ի պատասխան վարչապետ Կարապետյանի հարցի, թե ով է զբաղվելու Արմավիրում աղբահանության գործընթացի կազմակերպմամբ՝ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը զեկուցել է, որ գործարանի կառուցմամբ զբաղվող ընկերության հետ նախնական քննարկման արդյունքում, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ աղբահանությունը կիրականացնի գործարանը: Կարևորելով համայնքային տարբեր ծառայությունները, այդ թվում՝ աղբահանության կազմակերպումը, մասնավոր կառավարման հանձնելը՝ վարչապետը հանձնարարել է հետևողական լինել այս հարցում:

Ինչ վերաբերում է խտանյութերի և պահածոների արտադրության համալիր գործարանի հիմնման ծրագրին, վարչապետին զեկուցվել է, որ նախատեսվում է Արմավիրում գտնվող նախկին պահածոների գործարանի տարածքում հիմնել բանջարեղենի և մրգերի վերամշակման համալիր գործարան, որտեղ կարտադրվի տոմատի մածուկ, մրգային և բանջարեղենային այլ խտանյութեր, մրգային, հատապտղային և բանջարեղենային պահածոների լայն տեսականի: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,150.000.000 ՀՀ դրամ, ակնկալվում է ստեղծել 120 աշխատատեղ, արտադրել 1000-1500 տոննա տոմատի մածուկ: Նշվել է, որ սեփական ներդրումները կազմում են 400,000.000 ՀՀ դրամ, մնացած գումարը նախատեսվում է ձեռք բերել՝ ներգրավելով վարկային միջոցներ: Վարչապետը հորդորել է շարունակել բանակցություններն առևտրային բանկերի հետ՝ հայտնելով կառավարության աջակցությունն այդ գործընթացին:

Իսկ Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ներկայացրած ծրագրերի շարքում, մասնավորապես՝ քննարկվել է այգեգործական տնտեսության զարգացման ծրագիրը՝ խաղողի և ծիրանի այգիների հիմնման միջոցով: Նշվել է, որ 1.5 հա սեփականաշնորհված վարելահողը, սեփական և վարկային միջոցների հաշվին, հասցվել է 50 հեկտարի, հիմնվել են 30 հա խաղողի և 20 հա ծիրանի այգիներ: Անցկացրել է 4 կմ երկարությամբ ոռոգման ներքին համակարգ, որի շնորհիվ ոռոգման ջրի կորուստը 47 տոկոսից հասել է 5-10 տոկոսի: Այգեգործական տնտեսության զարգացման ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 251 մլն ՀՀ դրամ, որից 220 մլն ՀՀ դրամը /բնաիրային/ սեփական ներդրումներն են, մնացած 31 մլն ՀՀ դրամի համար ակնկալվում է ՀՀ կառավարության աջակցությունը: Ծրագրի արդյունքում նախատեսվում է ստեղծել 15 նոր աշխատատեղ, արտադրել տարեկան 380 տոննա խաղող, 100 տոննա ծիրան:

☞ 2

Կոոպերացիա էջ 4

Գործարար կանայք էջ 6

Մասնագետի խորհուրդը էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1

Կարևորելով ծրագրի իրականացումը՝ վարչապետը նշել է, որ դրա վարկավորման հնարավորությունները կքննարկվեն: Կարեն Կարապետյանը նաև հանձնարարել է պատասխանատուներին՝ տեղում ծանոթանալ կառուցված ոռոգման համակարգին և ուսումնասիրել դրա արդյունավետությունը:

Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի ղեկավարը, ներկայացնելով տարբեր ոլորտներին առնչվող մի քանի նախագծեր, մասնավորապես, անդրադարձել է խաղուն գինու արտադրության կազմակերպման ծրագրին և նշել, որ դրա ընդհանուր արժեքը կազմում է 150 մլն ՀՀ դրամ, սեփական ներդրումները 82.5 մլն ՀՀ դրամ, իսկ մնացած՝ 67.5 մլն ՀՀ դրամն ակնկալվում է ստանալ ՀՀ կառավարությունից՝ որպես վարկային միջոց: Նախատեսվում է տարեկան արտադրել 150.000 կգ խաղող, 100.000 լիտր խաղուն գինի: Վարչապետը հանձնարարել է պատասխանատուներին ուսումնասիրել վարկավորման հնարավորությունները և ներկայացնել առաջարկություններ:

* * *

Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի հերթական նիստը:

Հավանության է արժանացել նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների երեք ստուգաթերթ՝ ֆերմերային տնտեսություններում, ձկնաբուծարաններում ու սպանդանոցներում ստուգումներ իրականացնելու նպատակով: Ակնկալվում է, որ նախագծի ընդունումը հնարավորություն կտա կանոնակարգել հսկողությունն այս ոլորտում:

* * *

Կառավարության որոշմամբ, ներդրումային ծրագրի շրջանակում, երեք տարով կհետաձգվի «Սևան ակվա» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ներմուծման դեպքում, ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը: Մեկ այլ որոշմամբ էլ՝ թույլատրվել է ընկերությանն օգտվել գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը մաքսատուրքից ազատելու արտոնությունից:

Արտոնության առկայությունը լուրջ խթան կհանդիսանա ծրագրի իրականացման, նոր աշխատատեղերի ստեղծման, տեղական արտադրության և արտահանման խթանման համար: Ընկերությունը նախատեսում է Սևանա լճում տեղակայել ևս 12 մոդելային ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսություն՝ գործող թվով 12 ցանցավանդակի թիվը հասցնելով 24-ի: Ծրագրի իրականացման արդյունքում տեղական սպառողները հնարավորություն կունենան մշտապես սպառելու բարձրորակ և համեմատաբար մատչելի գներով ձկնամթերք: Մոդելային ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսություն կառուցելու համար ընկերությունը նախատեսում է իրականացնել շուրջ 1,75 մլրդ ՀՀ դրամի ներդրում, որից՝ սարքավորումների համար նախատեսված գումարը կկազմի մոտ 0,9 մլրդ ՀՀ դրամ: Արդյունքում՝ կստեղծվի մոտ 85 աշխատատեղ՝ 2017 թ.՝ 230, 2018 թ. 220, 2019 թ. 220 հազար ՀՀ դրամ միջին աշխատավարձով:

* * *

Հակակարկտային պաշտպանության նոր՝ հրթիռային եղանակի ներդրման պիլոտային ծրագրի իրականացման նպատակով կառավարության պահուստային ֆոնդից գումար կհատկացվի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Պիլոտային ծրագիրը կիրականացվի Արագածոտնի և Լոռու մարզերում:

Հիմնավորման համաձայն՝ Հայաստանում բնական տարբեր աղետները բացասաբար են անդրադառնում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարողների հետագա արտադրական գործունեության ու սոցիալական վիճակի վրա: Միայն 2016 թ. ընթացքում կարկտահարություններից գյուղատնտեսությանը հասցվել է մոտ 34 մլրդ ՀՀ դրամի վնաս: Վարչապետի հանձնարարությամբ ուսումնասիրություններ են անցկացվել ոլորտում: Կարկտահարություններից առաջացած վնասների կանխարգելման ներկա վիճակի վերլուծությունը փաստում է, որ այս բնագավառում հրատապ անհրաժեշտություն է առաջացել հակակարկտային պաշտպանության նոր եղանակների կիրառումը: Որոշման ընդունումը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի կորուստների նվազեցմանը և գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, եկամուտների ավելացմանը և գյուղում աղքատության հաղթահարմանը: Հնարավորություններ կստեղծվի գյուղատնտեսության առկա ռեսուրսային ներուժի օգտագործման և շուկայի պահանջներին համապատասխան արտադրության ծավալների ապահովման համար, կխթանվի հանրապետության գյուղատնտեսության հետագա զարգացումը, արդյունավետության ու մրցունակության բարձրացումը: Կարեն Կարապետյանը կարևորել է ծրագրի իրականացումը և նշել. «Մենք շատ մեծ հույս ենք կապում ծրագրի հետ: Կարծում եմ, որ այն չափազանց կարևոր և ազդեցիկ նշանակություն կարող է ունենալ գյուղատնտեսության զարգացման համար»:

ՀՈՒՇԱԳԻՐ

Թռչնաբուծության զարգացման հնարավոր ուղիները

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը, ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Հարությունյանը և «ԱԳԲԱ Լիզինգ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արսեն Բազիկյանն օրերս հուշագիր են ստորագրել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով, համագործակցության վերաբերյալ:

«Մենք հիմա բանակցություններ ենք վարում նաև այլ կազմակերպությունների հետ, որպեսզի ծրագրում ընդգրկված ֆինանսական կառույցների թիվն ավելանա: Շուկան բաց է, և որքան շատ լինեն մատակարարներն ու ֆինանսական կառույցները, այդքան ավելի մատչելի կլինի մեր գյուղացիական տնտեսությունների, ֆերմերների և կոոպերատիվների համար տեխնիկայի ձեռքբերումը», - իր խոսքում նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը:

«ԱԳԲԱ Լիզինգ»-ի գլխավոր տնօրեն Արսեն Բազիկյանն իր հերթին նշել է, որ այս հուշագիրը ֆերմերներին հնարավորություն կընձեռի գյուղտեխնիկա ձեռք բերել անախադեպ պայմաններով և հիմք կհանդիսանա իրենց բիզնեսի ընդլայնման համար: «Ֆերմերներն արդեն կարող են մեզ դիմել, առավելագույնս օպերատիվ և արագ կփորձենք արձագանքել բոլոր հայտերին», - հավելել է նա:

ՀՀ ԿԱ «ԳՏՏԶ ԾԻԳ» ՊՀ գյուղական ֆինանսավորման կառույցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Հարությունյանը տեղեկացրել է, որ մեծ է նաև գյուղատնտեսական գործիքների պահանջարկը:

Տնտեսավարողները, ծրագրի շրջանակում, կարող են ձեռք բերել տարբեր մակնիշների տրակտորներ, հացահատիկահավաք կոմբայններ, հավաքիչ-մամլիչներ, տրակտորային շարքացաններ, գութաններ, խոտհնձիչներ, կարտոֆիլատնկիչներ, կարտոֆիլաքանդիչներ, կուլտիվատորներ, ֆրեզներ և սրսկիչներ: Գյուղտեխնիկայի ձեռքբերման պայմաններն են՝ 20 % կանխավճար, տարեկան 2 % լիզինգային տոկոսադրույք, 3-10 տարի մարման ժամկետ՝ կախված տեխնիկայի տեսակից:

ԶԿՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հերթական արտոնություններ «Սևանի իշխան» ՓԲԸ-ին

ՀՀ կառավարությունը մայիսի 4-ին միանգամից երկու արտոնություն տվեց «Սևանի իշխան» ՓԲԸ-ին, որը Սևանա լճում ցանցավանդակային եղանակով, իշխան է աճեցնում: Գործադիրի որոշմամբ, 3 տարի ժամկետով, հետաձգվեց ընկերության կողմից, ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի վճարման ժամկետը:

Ընկերությունը նախատեսում է համալրել մանրաձկան և վերամշակման արտադրություններն անհրաժեշտ սարքավորումներով, որտեղ առաջիկա տարիների ընթացքում կաճեցվեն և կվերամշակվեն Սևանի իշխանի գեղարքունի և ամառային ենթատեսակներ, կստեղծվեն ձկան սելեկցիոն տնտեսություն և բացօթյա ավազաններ: Ընկերությունը նախատեսում է ներդրումներ իրականացնել շուրջ 682 միլիոն ՀՀ դրամի չափով, որից՝ սարքավորումների համար նախատեսված գումարը կկազմի մոտ 278 միլիոն ՀՀ դրամ:

Կառավարության մեկ այլ որոշմամբ էլ բավարարվեց «Սևանի իշխան» ՓԲԸ-ի կողմից ներդրումային ծրագրի շրջանակումներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական արքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը կազատվեն ներմուծման մաքսատուրքից:

Հիշեցնենք, որ 2017թ-ի ապրիլի 20-ի նիստում էլ գործադիրը 2 միլիարդ դրամ նվիրաբերեց Սևանա լճում ցանցավանդակային նոր տնտեսություն հիմնելու համար: Այս ծրագրի իրականացման համար պետությունը 2013-2015 թթ. անհատույց տրամադրել էր ևս 4 միլիարդ դրամ:

Ծրագրով նախատեսվում է Սևանա լճի 30 հա տարածքում մինչև 2024 թվականը տեղադրել 50 ցանցավանդակ՝ յուրաքանչյուրը 1000 տոննա արտադրողականությամբ, և աճեցնել 50000 տոննա գեղարքունի և ամառային իշխան՝ յուրաքանչյուր տարի իշխանի պաշարների վերականգնման նպատակով Սևանա լիճ բաց թողնելով տնտեսություններ լցվող մանրաձկան քանակի շուրջ 25 %-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ ջրի որակի վատթարացումը, լճի ճահճացումը, ձկների վտանգավոր ինֆեկցիոն հիվանդությունների տարածումը:

www.ecolur.org

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պարարտանյութի բաշխումը մոտենում է ավարտին

Լոռիի մարզկենտրոնի երկաթուղային կայարանում բեռնաթափվեց 6 վագոն՝ բեռնավորված 322 տոննա հանքային պարարտանյութերով: Դրանով ավարտվեց Թումանյանի, Տաշիրի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանների ֆերմերային տնտեսություններին պետական աջակցության ծրագրով, մատակարարվող պարարտանյութի պետական ծրագիրը:

Առաջիկա օրերին, Սպիտակի տարածաշրջանի համայնքներին տրվելիք 120 տոննա չափաքանակի բաշխումից հետո, լիովին կբավարարվի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար նախատեսված պարարտանյութի ամբողջ պահանջարկը: Ընդհանուր առմամբ, մարզի երկրագործներն ստացել են 1538 տոննա ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութ:

Ինչպես նշում է մարզպետարանի գյուղատնտեսության ու բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Արտյոմ Շահվերդյանը, լիովին բավարարվել է՝ ինչպես պարարտանյութի, այնպես էլ՝ սերմացուների հայտ ներկայացրած կոոպերատորների ու մենատնտեսների պահանջարկը: Ընդհանուր առմամբ, գարնանացանի համար 4500 հողօգտագործողներ ստացել են շուրջ 108 տոննա հացահատիկային ու կերային մշակաբույսերի և եգիպտացորենի սերմացու: Դաշտային կրծողների դեմ պայքարի արդյունավետությանը կնպաստեն մարզի 36 համայնքներին պետության կողմից անհատույց տրված 713 կիլոգրամ թունաքիմիկատները: Մայիսի երկրորդ տասնօրյակից սպասվում է նաև վաղօրոք հայտավորված մատչելի գներով դիզվառելանյութի բաշխումը մեխանիզատորներին:

ԱԳՐՈ Լրատու
Մայիս 5 - 16, 2017 թ.
թիվ 11 (2132)

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

«3 ՍԵՐՈՒՆԴ» ՇԱՐԺՄԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ 3-Ը ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԻՆՈՒ ՕՐԵՐԻՆ

Մայիսի 5-6-ը «3 սերունդ» շարժման անդամ 3 արտադրողներ՝ «Կոթի պրոդուկտ», «Սարի հովիվ» և «Միքայելյանների ընտանեկան ֆերմա-Արոմա դել վինո» ընկերությունները, մասնակցեցին Երևանյան գինու օրերին: Պանրի արտադրությամբ զբաղվող ձեռներեցներն այցելուներին էին հյուրասիրում իրենց արտադրության էկոլոգիապես մաքուր պանիրները: Արտադրողները ներկայացնում էին Հայաստանի 3 մարզերը՝ Տավուշ, Լոռի և Գեղարքունիք: Երևանյան գինու օրերին արտադրողները մասնակցել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և նրա գործընկեր կազմակերպությունների կողմից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի աջակցությամբ: Ծրագրի առաջնահերթություններից մեկն է՝ նպաստել չրերի, պանրի, գինու արտադրության և ջերմոցային տնտեսությունների զարգացմանը Հայաստանում:

Ծրագրի շրջանակում, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր «Ի-վի Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերությունը նախաձեռնել է «3 սերունդ» շարժումը, որի գերագույն նպատակներից մեկը՝ մարզերում աշխատող փոքր ձեռնարկությունների զարգացումն է, այդպիսով՝ արտագաղթի կանխումը հատկապես սահմանամերձ մարզերից: «3 սերունդը» նաև ընդհանուր բրենդ է շարժման մեջ ներգրավված արտադրողների համար, իսկ պիտակի առկայությունը նաև հավաստում է, որ այն կրող արտադրանքը համապատասխանում է որակի բարձր չափանիշների, որոնք սահմանվել են տեղական և միջազգային փորձագետների ակտիվ ներգրավմամբ:

Մասնակից ընկերություններից Միքայելյան ընտանեկան տնտեսությունը հիմնադրվել է 2012 թվականին՝ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում: Տնտեսությունը սկսել է փոքր արտադրությամբ՝ հիմնականում արտադրելով էկոլոգիապես մաքուր արտադրատեսակների՝ ընտանեկան սպառման համար: Պանիրների տեսականու մեջ իրենց առանձնահատուկ արտաքին տեսքով և համով առանձնանում են գինու մեջ հասունացվող «Արոմա դել Վինո» պանիրները: Արտադրական գործընթացում օգտագործվում է միայն սեփական կովերից ստացվող բարձրորակ կաթը:

«Koti Product» ընկերությունը հիմնադրվել է 2012 թ.՝ Տավուշի մարզի Կոթի գյուղում, որը հարևան երկրի տարածքից անընդհատ ենթարկվում է գնդակոծման: Չնայած մեծ ռիսկին՝ Ընկերության հիմնադիր Գուրգեն Աբովյանը և նրա ընտանիքը վճռական են հայրենի գյուղում պանրի արտադրությունն ընդլայնելու որոշման հարցում: Անկախ հանգամանքներից՝ արդեն 5 տարի ընկերությունն աշխատում է փոքրիկ արտադրամասի զարգացման ուղղությամբ՝ ամեն տարի ավելացնելով սարքավորումների թիվը և արտադրության ծավալները:

«Սարի Հովիվ» պանիրներն արտադրվում են Լոռու մարզի Ուռուտ համայնքում՝ Պապյանների ընտանեկան ձեռնարկությունում: Պանրի որակն ապահովվում է տեղական բարձրակարգ կաթի օգտագործման, քրտնաջան աշխատանքի, արտադրական պայմանների և տեխնոլոգիայի մշտապես բարելավման, սանիտարական պայմանների հսկողության արդյունքում: Ստեղծման օրից արտադրամասի կայացմանն աջակցություն են ցուցաբերել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, JICA-ն:

www.smdenc.am

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԽԱՉԻԿՑԻՆԵՐԻ ՄԻԱԿ ԽՆԴԻՐԸ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է

Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի 1000 բնակիչների գերակշռող մասը զբաղված է գյուղատնտեսության զարգացմամբ: «Խաչիկցիները թե՛ հմուտ այգեգործներ են, և թե՝ լավագույն անասնապահներ: Գյուղից գրեթե արտագաղթողներ չկան»,-պատմում է համայնքի ղեկավար Վարդան Ներսիսյանը:

Համայնքապետի կարծիքով, գյուղի ամենամեծ խնդիրը՝ ոռոգման ջրի բացակայությունն է: Խնդրի լուծման նպատակով դիմել են համապատասխան գերատեսչությունների՝ շուրջ 500 հազար մ^3 տարողությամբ ջրամբար կառուցելու առաջարկով: Այն հնարավորություն կտա գյուղատնտեսական հողատարածքները լիովին ապահովել ջրամատակարարմամբ: Ցանքատարածքներն առայժմ ջրվում են ինքնահոս եղանակով, սակայն այս դեպքում էլ՝ պետք է տեղումներն առատ լինեն, որպեսզի բավարար քանակությամբ ջուր հասնի այգիներին ու դաշտերին: Բացի այդ, ջրման այս եղանակը սեզոնային բնույթ է կրում: «Ամռան ամիսներին կլիման հիմնականում չորային է, ջուրը՝ սակավ, ոռոգման ջրի խնդրի լուծման միակ եղանակը ջրամբարի կառուցումն է»,- եզրահանգում է համայնքապետը: Ջրամբարի կառուցման համար, ըստ նախնական հաշվարկների, պահանջվում է շուրջ 2 մլն դոլլար, ուստի առանց որևէ կազմակերպության կամ դոնորների ֆինանսական աջակցության, հնարավոր չէ այդ ծրագիրն իրականություն դարձնել: Գյուղապետի կարծիքով ոռոգման խնդրի կարգավորման դեպքում, գյուղում գրեթե կրկնակի կավելանան մշակվող հողատարածքները, և եթե այսօր գյուղացիները, ոչ լիարժեք ոռոգման պայմաններում, մշակում են 160 հա հողատարածք, ապա ոռոգման ջրի առկայության պարագայում այն կարող է հասնել 400 հա-ի: Ծրագրել են հիմնել պտղատու այգիներ, ընդլայնել ցանվող մշակաբույսերի տեսականին, ինչը կնպաստի գյուղացու եկամուտների ավելացմանը: Առայժմ ստիպված են ցանել միայն հացահատիկային մշակաբույսեր: Նախատեսել են զբաղվել նաև չրագործությամբ: Ըստ համայնքապետի, առաջնահերթը՝ կանանց և երիտասարդության զբաղվածության խնդրի լուծումն է, որպեսզի գյուղացիները չհեռանան գյուղից: «Մեկ հա խնձորի այգի մշակելու դեպքում այգեգործները տարեկան կարող են ունենալ 5-8 մլն դրամի եկամուտ: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դեպքում՝ կարելի է բարձր արդյունք ստանալ»,- եզրահանգում է համայնքապետը:

Ոռոգման խնդրի լուծման դեպքում նախատեսել են կազմակերպել նաև կերային մշակաբույսերի ցանք, քանի որ գյուղն ունի անասնաբուծության զարգացման միտում, դրա համար առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ բուսածածկով հարուստ լայնարձակ արոտավայրեր և այլն: Սակայն գյուղը չունի կաթի մթերման կետեր և վերամշակման արտադրամաս: Արտադրված կաթը վերամշակում և արտադրանքը դժվարությամբ իրացնում է գյուղացին: «Եթե ստեղծվեն հնարավորություններ և պայմաններ, Խաչիկ համայնքում կզբաղվեն նաև օրգանական գյուղմթերքների արտադրությամբ:

Ի դեպ, այդ նպատակով այս տարվանից սկսել են համագործակցել «Էկոգլոբ» կազմակերպության հետ»: Ալպյան գոտում գտնվող այս գյուղում արտադրվում է նաև բարձրորակ մեղր, առկա է 3 հազար մեղվաընտանիք: Համայնքապետի կարծիքով, մեղրի իրացումը ևս պետք է կազմակերպված բնույթ կրի: Նրա խոսքով՝ Խաչիկում հնարավոր է արտադրել այնքան գյուղմթերք, որով կարելի է բավարարել ոչ միայն ներքին շուկայի պահանջարկը, այլև՝ արտահանել:

Նելլի Սահակյան

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ԿՐՈՂԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՂԸ ՀԱՅ ԿԻՆՆ Է

Թամարա Մաղաքյանն աշխատում է «Թամարա ֆրուտ» ընկերությունում՝ որպես տեխնոլոգ և լաբորատորիայի վարիչ: Նա միաժամանակ օրգանիկ գյուղատնտեսության և վերամշակման արտադրության պատասխանատու է: Այդքան մեծ ու պատասխանատու աշխատանքային ծանրաբեռնվածությանը զուգընթաց, Թամարան, իր ընտանիքի անդամների հետ միասին, վարում է բազմաճյուղ ֆերմերային տնտեսություն: Զբաղվում է մեղվաբուծությամբ, ճագարաբուծությամբ, թռչնաբուծությամբ և ագրոտուրիզմի կազմակերպմամբ:

Ամուսինը մասնագիտությամբ ինժեներ է, սակայն համապատասխան աշխատանք չգտնելով, ընտանիքի անդամների՝ կնոջ, դստեր և որդու հետ միասին, Աշտարակ քաղաքի իրենց տնամերձ հողատարածքներում, սկսել են զբաղվել ընտանեկան ֆերմերությամբ: Մասնագիտական բոլոր հարցերի կարգավորման գործընթացում, ինչ խոսք, իր ծանրակշիռ տեղն ունի Թամարան, ով իր անսպառ գիտելիքները ներ է դնում թե՛ «Թամարա ֆրուտ» ընկերությունում, և թե՛ սեփական ֆերմերային տնտեսությունում: Աշխատելուց չի հոգնում, ամբողջ օրը զբաղված է հանրօգուտ աշխատանքով, ապրում է հայ կնոջը բնորոշ՝ իմաստավորված կյանքով: Որդին մասնագիտությամբ գինեգործ-մեղվաբույծ է, դուստրը՝պատմաբան–կովկասագետ: Խնամում են 50 մեղվաընտանիք, որոնց թիվն առաջիկա 2 տարիներին նախատեսել են հասցնել 150-ի: Անարատ մեղրը տարայավորում և փաթեթավորում է Թամարան, արտադրանքի ապրանքային տեսքը հաճելի և գրավիչ դարձնելով գնորդների համար, հմուտ մասնագետը հաճույքով է պատրաստում նաև Աշտարակի տարածաշրջանի արդեն ավանդույթ դարձած քաղցրավենիքները և անուշեղենը, նախատեսել է կազմակերպել նաև պահածոների արտադրություն:

Տնտեսությունում առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ագրոէկոտուրիզմի զարգացման համար: Ունեն սեփական հացատուն, գինու մառան, որոնք ձևավորված են ազգային կահ-կարասիով, ամենաուշագրավը՝ պապական սունդուկը և կահույքն է, որոնք Էրգրից Թամարայի ամուսնու նախնիներն են գաղթելով՝ հասցրել Արևելյան Հայաստան: Գինին այսօր էլ պահում են այդ կարասներում, որպեսզի պահպանվեն վերջինիս որակական հատկանիշները: Տնտեսությունում արտադրվում է բացառապես օրգանական գյուղմթերք: Այցելուներն այս տնտեսությունից հեռանում են գոհունակությամբ և մեծ բավականություն ստացած: «Հայ կինը դարեր շարունակ եղել է ավանդույթները կրողն ու պահպանողը: Կանայք պետք է մասնակցություն ունենան բնապահպանորեն մաքուր սննդամթերքի արտադրության կազմակերպման գործընթացին, լինեն ոչ միայն նախաձեռնող, այլև՝ իրականացնող: Պետք է սնվել անարատ սննդամթերքներով, որպեսզի ունենանք նաև առողջ սերունդ»,- ասում է Թամարա Մաղաքյանը:

Զբոսաշրջիկներն առայժմ օգտվում են տնտեսության հարևանությամբ գործող ձիարշավարանի հնարավորություններից: Նախատեսել են, համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում, ագրոէկոտուրիզմի զարգացման նպատակով, ստեղծել նաև մասնավոր ձիաբուծական տնտեսություն:

Նելլի Սահակյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԽՆԴԻՐԸ ՄԻԱՅՆ ԱՇԽԱՏԵԼՆ ՈՒ ԱՐՏԱԴՐԵԼԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

ՀՀ Լոռու մարզի «Մարգահովիտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը ձևավորվել է 2016 թ.-ին՝ 80 հիմնադիր անդամների նախաձեռնությամբ: Այդ կարճ ժամանակահատվածում հեռագնա արոտավայրերի բարելավման ուղղությամբ արդեն զգալի աշխատանքներ են տարվել:

«Իրազեկված էինք, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԾԻԳ-ը իրականացնում է «Արոտավայրերի բարելավման» ծրագիր: Եվ քանի որ գյուղում զարգացած էր անասնաբուծությունը, համայնքի ժողովում գյուղացիներն առաջարկեցին ստեղծել սպառողական կոոպերատիվ: Գյուղացուն հոգեհարազատ էր կոոպերատիվ ստեղծելու գաղափարը, քանի որ մեծ էին ծրագրից սպասելիքները»,- պատմում է «Մարգահովիտ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ Սայաթ Խաչատրյանը: Կոոպերատիվի հիմնադրումից հետո, անմիջապես ձեռնամուխ եղան արոտավայրերի ջրարբիացման աշխատանքների իրականացմանը: Հեռագնա արոտավայրերի «Ծակքար» կոչվող սարամասում տեղադրվել է 3 խմոց: Կենդանիների համար կառուցվել է փարախ և ամառային կացարաններ: «Ջավախի ձոր» հանդամասում, որը գտնվում է գյուղից 3 կմ հեռավորության վրա, տեղադրվել է 1 խմոց: Իսկ «Իթոլան» կոչվող սարամասում կառուցվել են կենդանիների ամառային կացարան և հովվատուն: «Արոտավայրերի բարելավմանն ուղղված բոլոր ծրագրերի իրականացման համար համայնքապետարանը ժամանակին է կատարել իր ներդրումները: Աշխատանքներն իրականացվել են մեծ արագությամբ և պատշաճ մակարդակով: Անասնաբուծության զարգացման մեծ ներուժ ունեցող Մարգահովիտ համայնքի համար շատ կարևոր էր նման ծրագրի իրագործումը, քանի որ վերջնականապես լուծվել է արոտավայրերի ջրարբիացման խնդիրը, բարելավվել են նաև սարամասեր տանող ճանապարհները»,- անդրադառնալով կատարված աշխատանքներին՝ նշում է համայնքի ղեկավար Սամվել Անանյանը:

Մարգահովտում արոտային շրջանը սկսվում է մայիսի վերջին և հունիսի սկզբներին: Ամռան ամիսներին սար են բարձրանում շուրջ 600 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ: Արոտավայրերի ջրարբիացման աշխատանքների վերջնական ավարտից հետո կսկսվի նաև կոոպերատիվին տեխնիկայով համալրելու գործընթացը: Կոոպերատիվի անդամներով որոշել են ձեռք բերել 2 հատ «Բելառուս» մակնիշի տրակտոր, խոտհնձիչներ, խոտհավաք սարք, մամլիչ, ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենա՝ սար բարձրանալու համար: Ծրագրել են բացել նաև կաթի մթերման կետ և վերամշակման արտադրամաս: Այդ նպատակով, կոոպերատիվի անդամներն անասնագլխաքանակն ավելացնելու որոշում են կայացրել: «Որոշել ենք կոոպերատիվի անդամներով մշակության տակ դնել նոր, նախկինում անմշակ մնացած հողատարածքներ, որոնք հիմնականում դրվելու են կերային մշակաբույսերի ցանքի տակ, ցանելու ենք առվույտ, կորնգան, բազուկ և այլն: Որոշել ենք միասին և միաժամանակ սկսել նաև հողի մշակության աշխատանքները, որպեսզի այդպիսով հեշտացվեն տեխնիկայով կատարվող աշխատանքները»,- ասում է կոոպերատիվի նախագահ Սայաթ Խաչատրյանը: Որոշ ծրագրերի իրականացման նպատակով, նախատեսել են բանկերից վարկեր վերցնել:

Ալայան գոտում գտնվող Մարգահովիտ գյուղում արտադրվում է նաև մեծ քանակությամբ բարձրորակ միս, այդ առումով, կարևոր է ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով հագեցած սպանդանոցի հիմնումը: «Կուզենայինք, որպեսզի կոոպերատիվի նկատմամբ էլ ավելի մեծանար պետական հոգածությունը, ավելի մեծ աջակցություն ցուցաբերվեր, որպեսզի գյուղացու խնդիրը միայն աշխատելն ու արտադրելը լիներ»,- հավելում է կոոպերատիվի նախագահը:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ ԿԱՐՈՂ Է ԼՈՒՐՋ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄՆԵԼ

ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության նախաձեռնությամբ (USAID), ինչպես նաև Հայաստանի «Ֆուլեր» Տնաշինական կենտրոնի և «Հեյֆեր փրոջեքթ Ինթերնեյշնլ»-ի հայաստանյան մասնաճյուղի ծրագրերով, 2014 թ.-ին ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրում համայնքում, 14 հիմնադիր անդամների կողմից, հիմնվել է «Մեծ Այրումի միրգ արտադրողների միավորում» սպառողական կոոպերատիվը: Նպատակը՝ մրգերի արտադրության արժեշղթայի բարելավումն ու զարգացումն է՝ ավելի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառման ճանապարհով:

Կոոպերատիվի նախագահ Տիգրան Նազարյանի տեղեկացմամբ, ավելի քան 8 մլն արժեք ունեցող ծրագրի իրականացման համար, 800 հազար դրամ ներդրել է գյուղապետարանը՝ կոոպերատիվին անհատույց հատկացված կիսավեր շինությունների շինարարական և վերանորոգման աշխատանքների կատարման համար: Կոոպերատիվը ներդրել է ավելի քան 500 հազար դրամ՝ շինանյութի ձեռքբերման և շինարարական աշխատանքների կատարման նպատակով: Կոոպերատիվի անդամների հիմնական զբաղվածությունը մրգի արտադրության կազմակերպումն է: Ստացված բերքի պահպանության նպատակով կառուցվել է նաև 50 տոննա տարողությամբ սառնարան: «Ընթացիկ տարում բավականին բարձր բերք է սպասվում: Գյուղի տարածքում նախորդ տարի տեղադրվել են 3 հակակարկտային կայաններ՝ բերքը կարկտից պաշտպանելու նպատակով: Նախատեսել ենք մրգի զգալի մասն իրացնել բարձրակարգ խանութների միջոցով, մի մասն էլ՝ արտահանել: Երկու ուղղությամբ էլ բանակցություններ ենք վարում»,- պատմում է կոոպերատիվի նախագահը: Նախատեսել են ձեռք բերել սուբսիդավորված գյուղտեխնիկա, համալրել կոոպերատիվի մեքենատրակտորային հավաքակայանը: Այդ նպատակով, որոշել են կոոպերատիվի անդամներով վերցնել վարկ, որի մի մասն էլ կտրամադրվի արտադրության զարգացմանը: «Բելառուս» մակնիշի տրակտոր ձեռք բերելուց հետո, տեխնիկայով աշխատանքներ կտարվեն նաև համագյուղացիների հողամասերում: Կոոպերատիվի անդամները հիմնականում աճեցնում են խաղող, պնդուկ, արքայախնձոր, դեղձ, սալոր, կեռաս և այլն: Հիմնվում են նաև նոր այգիներ, տնկվում են խնձորենու տարբեր սորտեր՝ հիմնականում թզուկ ծառատեսակներ: Հողագործները զանգվածային տարածքներ դրել են նաև արևածաղկի և կերային մշակաբույսերի ցանքի տակ, քանի որ մեծ է վերջիններիս պահանջարկը: «Մեր տարածաշրջանի գյուղատնտեսական հիմնական ուղղվածությունը պտղաբուծությունն է, որի զարգացման համար պետք է պայմաններ ստեղծվեն: Մենք պատրաստ ենք արտադրել մեծ քանակությամբ բարձրորակ միրգ, միակ խնդիրը՝ կայուն իրացումն է»,- հավելում է Տիգրան Նազարյանը: Կոոպերատիվի անդամներով որոշում են կայացրել զբաղվել նաև չրագործությամբ, այդ նպատակով նախատեսել են ձեռք բերել չորացման սարքավորումներ: «Համոզված ենք, որ համախմբված աշխատանքով կհասնենք լուրջ հաջողությունների, քանի որ կոոպերատիվի սկզբունքը տալիս է այդ հնարավորությունը»,- համոզված է Տիգրան Նազարյանը:

Կոոպերատիվի նախագահը վարում է ֆերմերային բազմաճյուղ տնտեսություն, զբաղվում է թե՛ այգեգործությամբ, և թե՛ անասնաբուծությամբ: Սեփականաշնորհված հողատարածքներից բացի, մշակում են նաև վարձակալած հողատարածքներ, որոնք հիմնականում դրվում են հացահատիկային և բանջարանոցային մշակաբույսերի ցանքի տակ: «Գյուղատնտեսությունը պետք է զարգանա՝ ըստ գոտիականության, դրա համար հարկավոր է հստակեցնել, թե ո՞ր տարածաշրջանում ի՞նչ պետք է ցանվի, որպեսզի լինի արդյունավետ: Այդ նպատակով, անհապաղ, պետք է կազմվեն զարգացման ծրագրեր և արագորեն կյանքի կոչվեն»,- հավելում է Տիգրան Նազարյանը:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Օրերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում էին Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի բնագիտական հոսքի 10 – րդ դասարանի աշակերտները՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրեն Տաթևիկ Փնջոյանի, կենսաբանության ուսուցչուհի Ռուզաննա Մկրտչյանի և դասղեկ Հեղինե Սահակյանի ուղեկցությամբ:

Աշակերտները հանդիպեցին մասնաճյուղի տնօրեն Ալեքսանդր Հակոբյանի և դասախոսների հետ, միասին շրջեցին ուսումնական մասնաշենքում, ծանոթացան մասնաճյուղի լաբորատոր-լսարանային պայմաններին, եղան գրադարան-ընթերցասրահում: Այնուհետև ապագա ուսանողներն ականատես եղան, թե ինչպես են լաբորատորիաներում կատարվում զանազան փորձեր: Անասնաբուժա-սանիտարական փորձաքննության և սննդի անվտանգության լաբորատորիաներում ՀԱԱՀ–ի անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկան, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Վարդանյանն աշակերտների հետ զրուցեց անասնաբուժական բժշկագիտության, սննդի անվտանգության խնդիրների և ագրարային ոլորտի մասնագիտությունների կարևորության հետ առնչվող հարցերի շուրջ: 2002 թ.-ից սկսած՝ Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցը դարձել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հենակետային դպրոց, և շրջանավարտները հնարավորություն են ունեցել հարցազրույցով ընդունվելու Հայաստանի ազգային ագրարային համալսարան: «Այսօր ՀԱԱՀ –ի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Ա. Հակոբյանի և մասնաճյուղի կոլեկտիվի համատեղ ջանքերով ստեղծվել է կրթության որակն ապահովող ուսումնական այնպիսի հզոր բազա, որ բոլորս հիացմունքով ենք դիտում և լսում մասնագետներին»,- իր խոսքում ընդգծեց Տ. Փնջոյանը: Այցը եզրափակվեց գիտաժողովների դահլիճում, որտեղ նրանք դիտեցին մասնաճյուղի մասին պատմող տեսահոլովակներ, ապա ծանոթացան բուհի մասնագիտություններին և ընդունելության կանոնակարգին: Վերջում մասնաճյուղի տնօրեն Ա. Հակոբյանը պատասխանեց աշակերտներին հետաքրքրող հարցերին:

ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղ

ԱԳՐՈ Լրատու
Մայիս 5 - 16, 2017 թ.
թիվ 11 (2132)

ՀԱՐԾԱԶՐՈՒՅՑ

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԼՈՌԵՑԻՆԵՐՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԱՐԴՅՈՒՆՔ ԿԱՊԱՀՈՎԵՆ

Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի և զարգացման հեռանկարների մասին է մեր հարցազրույցը ՀՀ Լոռու մարզպետարանի բնապահպանության և գյուղվարչության պետ Գրիգոր Հակոբյանի հետ:

-Պրն Հակոբյան, ՀՀ Լոռու մարզում յուրաքանչյուր տարի գրանցվում է ցանքատարածությունների և բերքատվության ավելացում: Սակայն մշակաբույսերի միջին բերքատվությունը հաճախ զիջում է հանրապետության միջին ցուցանիշներին: Որո՞նք են պատճառները:

-Պատճառները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների, մարզի կլիմայական պայմաններին հարմարված սերմացուների բացակայությունն է, գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը և այլն: Գրեթե յուրաքանչյուր տարի մարզի ցանքատարածությունները խիստ տուժում են տարերային աղետներից (կարկտահարություններ, հորդառատ անձրևներ, ջրհեղեղներ, փոթորիկներ), սակայն միշտ չէ, որ ՀՀ կառավարությունը միջոցներ է ձեռնարկում՝ աղետներից տուժածներին օգնելու համար: Բույսերի վեգետացիայի ամբողջ ընթացքում անընդհատ դիտվում են կարկտահարություններ՝ գյուղացիական տնտեսություններին պատճառելով զգալի վնաս: Մարզի 23 համայնքներում, ընդհանուր առմամբ, տեղադրված հակակարկտային 40 կայաններից,յուրաքանչյուրի ծածկույթը կազմում է 80-100 հա: Այդպիսով, պաշտպանված է ցանքատարածությունների շուրջ 3200 հա-ը կամ՝ 7.6 %-ը, որը խիստ անբավարար է: Անհրաժեշտ է ավելացնել հակակարկտային կայանների քանակը: 2016 թ. մարզում առկա 42089 հա վարելահողերից մշակվել է 33185 հա կամ 78.8 %-ը: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են շուրջ 14-14.5 հազար, կարտոֆիլինը՝ 4-4.6 հազար, բանջարեղենինը՝ 1-1.5 հազար հա, որոնք հիմնականում գտնվում են ռիսկային գոտիներում: Արտադրվում է՝ 45-47 հազար տոննա հացահատիկ և հատիկաընդեղեն, 70-75 հազար տոննա կարտոֆիլ, 25-30 հազար տոննա բանջարեղեն: Նշված մշակաբույսերի արտադրության արդյունքում, շուկայում նկատվում է գերարտադրություն, ինչը բերում է գների իջեցման, այդ պատճառով վտանգվում է մշակաբույսերի արտադրության արդյունավետությունը:

-Իսկ ինչ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել՝ գյուղատնտեսության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

-Արդյունավետությունը բարձրացնելու նպատակով խիստ կարևոր է վերամշակող ձեռնարկությունների, սառնարանային տնտեսությունների ստեղծումն ու արտահանման հնարավորությունների պետական օժանդակության ցուցաբերումը: Մարզում հեռանկարային զարգացման հնարավորություններ կան հնդկացորենի (гречка) արտադրության բնագավառում, նախորդ տարի փորձնական ցանքեր են կատարվել Սպիտակի, Մեծ Պարնի և Լեռնանցք համայնքներում և հողագործողների շրջանում լուրջ հետաքրքրություն է առաջացել այդ մշակաբույսի արտադրությամբ զբաղվելու ուղղությամբ, քանի որ 1 հա-ից ստացվող բերքը կազմել է շուրջ 1.5-2.0 տոննա: Մարզում հնդկացորենի արտադրությունը զարգացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել բերքը վերամշակելու, պատրաստի արտադրանք ստանալու և փաթեթավորման սարքավորում:

-Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը՝ պտղաբուծության բնագավառում:

-Դեռևս 1993-96 թթ. մարզում առկա էին շուրջ 5000 հա պտղատու այգիներ: Սակայն 2016 թ.-ի տվյալներով, մարզի այգիները կազմում են ընդամենը 2263 հա (ներառյալ տնամերձերը): Մարզի ցածրադիր գոտու համայնքներում հեռանկարային է կորիզավորների այգիների հիմնումն ու զարգացումը (դեղձ, ծիրան, սալոր, կեռաս, արքայախնձոր): Կան բոլոր նախադրյալները՝ ճյուղի զարգացման համար:

-Որքա՞ն ֆերմերային տնտեսություններ են գործում մարզում և ի՞նչ ուղղությամբ:

-Մարզում գործում է՝ հողագործությամբ զբաղվող ֆերմերային 4, թռչնաբուծությամբ զբաղվող՝ 2, անասնաբուծական ֆերմերային 17 խոշոր և մեղվաբուծությամբ զբաղվող 364 տնտեսություններ: Կան նաև կաթի վերամշակմամբ զբաղվող 20, պտուղ-բանջարեղենի վերամշակմամբ զբաղվող՝ 2 և պտղի ու հատապտղի սառնարանային 6 տնտեսություններ: Վերջին տարիներին զարգանում են նաև ջերմոցային տնտեսությունները, գործում են ջերմոցային 4 տնտեսություններ: Մարզում առկա է ժամանակակից սարքավորումներով հագեցած 1 սպանդանոց:

-Ինչ կարևոր քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի մարզում զարգանա գյուղատնտեսությունը:

-Մարզի գյուղատնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունի հողաբարելավման համալիր միջոցառումների իրականացումը, որոնց կարևոր բաղադրիչներից է ոռոգման համակարգերի բարելավումը, քանի որ առանց արհեստական ոռոգման, անհնար է կազմակերպել գյուղմթերքների ինտենսիվ արտադրությունը: Տարբեր ծրագրերի միջոցով, մարզի ոռոգման համակարգերի բարելավման նպատակով, 2011-2016 թթ., կատարվել է ավելի քան 550 մլն դրամի ներդրում: Սակայն, մարզի ոռոգման համակարգի տեխնիկական վիճակը դեռևս բավարար չէ, քանի որ այսօր ավելի քան 9612 հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է մոտավորապես 2500-3000 հա: Խորհրդային տարիներին մարզի ոռոգելի տարածքները կազմել են ավելի քան 15 հազ. հա: Այժմ, ըստ մարզային հողային հաշվեկշռի, դրանք կազմում են 9612.1 հա: Ոռոգման աշխատանքներն իրականացվում են 4 մեծ միջտնտեսային ջրանցքների՝ Նալբանդի մեծ ջրանցքի (36.0 կմ երկարությամբ), Լոռու մայր ջրանցքի՝ իր դոտացիոն ջրանցքներով (62.81 կմ ընդհանուր երկարությամբ), Կիրովի ջրանցքի՝ (9.3 կմ երկարությամբ), և Այրում-Ճոճկան մայր ջրանցքի՝ (17.2 կմ երկարությամբ), ինչպես նաև՝ 12 պոմպակայաններ և ավելի քան 400 կմ երկարությամբ ներտնտեսային ոռոգման ցանցերի միջոցով, որոնք այսօր ամբողջությամբ գտնվում են խիստ քայքայված վիճակում:

-Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը անասնաբուծության բնագավառում:

-Մարզում, վերջին տվյալներով, 39735 գյուղացիական տնտեսություններում հաշվառվել են 81769 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնցից կովեր՝ 40864, խոզեր՝ 15358, ոչխարներ և այծեր՝ 37919, ձիեր՝ 2573 գլուխ, թռչուններ՝ 273086 թև: Առկա են նաև 25512 մեղվաընտանիքներ: Անասնագլխաքանակի ավելացմանը զուգընթաց, ավելանում է նաև անասնաբուծական ծագման մթերքների արտադրությունը: Իրացման հնարավորություն չունենալու պատճառով, ներկայումս ազգաբնակչության մոտ կուտակվել է մեծ քանակությամբ բուրդ և մեղր: Այդպես շարունակվելու դեպքում կկորցնենք մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի զգալի մասը, իսկ մեղվաբուծությամբ զբաղվող մարդիկ պարզապես կհիասթափվեն մեղվաբուծությունից:

Ստեղծելով մսի, բրդի, մեղրի ընդունման և վերամշակման ձեռնարկություններ՝ մարզում կլուծվի ֆերմերների արտադրանքի իրացման խնդիրը, որը կնպաստի գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների աճին, ինչպես նաև՝ կավելանա մանր եղջերավոր կենդանիների և մեղվաընտանիքների քանակը: Կենդանիների սպանդը պատշաճ մակարդակով իրականացնելու, ինչպես նաև ժամկետանց և անհայտ ծագման մսի և մսամթերքի վաճառքից խուսափելու համար, անհրաժեշտ է մարզի բոլոր տարածաշրջաններում ստեղծել սպանդանոցներ և օրենսդրական կարգավորմամբ արգելել բակային մորթերը:

-Այսօր առավել, քան երբևէ, շատ է խոսվում սպառողական կոոպերատիվների գործունեության անհրաժեշտության մասին: Ինչպիսի՞ն է կոոպերատիվների ստեղծման գործընթացը ՀՀ Լոռու մարզում:

-«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, 2011-2016 թթ. ընթացքում, մարզի 20 համայնքներում ձևավորվել են գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ: Ծրագրի իրականացման շրջանակներում, կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 75 միավոր գյուղտեխնիկա (18 անիվավոր տրակտոր, 13 մամլիչ և 44 միավոր այլ գյուղգործիքներ): Կատարվել են նաև արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներ, կառուցվել է 9.6 կմ երկարությամբ ջրագիծ, տեղադրվել է 45 հատ խմոց:

Ծրագրի շրջանակներում, մինչ այժմ, իրականացվել է շուրջ 508.8 մլն դրամի ներդրում, որից՝ 304.2 մլն արոտների ջրարբիացման, իսկ 204.6 մլն գյուղտեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: Իրականացված միջոցառումների պարբերական մշտադիտարկման արդյունքում, գրանցվել է 20 % կաթնատվության աճ և կենդանիների շուրջ 15 % քաշաճ: Լոռու մարզում ավանդաբար զարգացած է գյուղատնտեսությունը, առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները նաև ագրոտուրիզմի զարգացման համար: Մի փոքր աջակցության դեպքում լոռեցիներն աննախադեպ արդյունք կապահովեն:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԵՋՈԱՐՅԱՆ ԱՅԾԵՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԿԱ ԵՆ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վայոց ձորի մարզի «Գնիշիկ» համայնքի պահպանվող տարածքում արդեն առկա է շուրջ 500 գլուխ բեզոարյան այծ, որոնց գլխաքանակը շարունակում է ավելանալ:

Շրջակա միջավայրի իրավապաշտպան (Արենիի տարածք) Վարդգես Ղարախանյանի տեղեկացմամբ, այդ բնիկ կենդանիների բազմացման համար նպաստավոր են թե՛ բնակլիմայական պայմանները, և թե՛ լանդշաֆտը: «Կենդանիները շարունակում են բազմանալ, նոր հոտեր են առաջանում, թեև կա նաև դրանց միգրացիայի (տեղաշարժման) երևույթը, որը նույնպես բնականոն ընթացք է»,- պատմում է պրն Ղարախանյանը: Ինչ վերաբերում է որսագողությանը,



ապա ըստ նրա, այն բացառված է, քանի որ «Գնիշիկ» հիմնադրամի ներդրած նոր համակարգի պայմաններում, հնարավոր չէ որսագողություն կատարել: Բացի այդ, որսագողության հայտնաբերման դեպքում սահմանված են շատ մեծ տուգանքներ:

Կենդանիների պաշտպանությունն ապահովելու համար առկա է համապատասխան նյութատեխնիկական բազա, տեսուչներն ունեն անհրաժեշտ փոխադրամիջոցներ, արտահագուստ, կապի միջոցներ, գործում են սարամիջյան ճանապարհները:

Լեռնային այդ հազվագյուտ այծերի թիվը վերջին 2 տասնամյակում խիստ նվազել էր, դրան զգալիորեն նպաստել էր նաև ղարաբաղյան պատերազմը: Կենդանիները գրանցված էին «Կարմիր գրքում» և խիստ պաշտպանության կարիք ունեին, ինչին էլ ձեռնամուխ եղավ «Գնիշիկ» հիմնադրամը: Վարդգես Ղարախանյանի կարծիքով՝ առկա են նաև բոլոր պայմանները՝ տարածաշրջանում էկոտուրիզմի զարգացման համար:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳԵՐԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՋԵՐՄՈՑԸ ԿԱՄ ԱԿՎԱՊՈՆԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գեղարքունիքի մարզում մի յուրահատուկ ջերմոց կա, որը հիմնադրել է մասնագիտությամբ էկոլոգ Անի Մկրտչյանը: Երկար ուսումնասիրություններից հետո Դդմաշեն համայնքում նա ներդրել է գյուղատնտեսության նոր ու գերժամանակակից տեխնոլոգիա՝ ակվապոնիկան:

Ակվապոնիկան ակվակուլտուրայի (ձկների, խխունջների, խեցգետնանմանների և այլ տեսակի ջրային կենդանիների բուծումն արհեստական ավազաններում) և հիդրոպոնիկայի (բույսերի աճեցումն առանց հողի) համադրությունն է: Այսինքն՝ փակ ջերմոցում բույսերի աճեցման համար հողի փոխարեն օգտագործվում է ջուրը, որը հարստացվում է հարևանությամբ բազմացող ձկների արտաթորանքով: Ստացված արտազատումներն անմիջապես օգտագործվում են որպես էկոլոգիապես մաքուր պարարտանյութ: Ակվապոնիկան նորարություն է Հայաստանում և տարածաշրջանում: Այն որպես համակարգ՝ առկա է զարգացած երկրներում՝ ԱՄՆ-ում, եվրոպական երկրներում:

Գյուղատնտեսության մեջ գերժամանակակից այս ճյուղը Հայաստանում ներդնելու միտքը էկոլոգ Անի Մկրտչյանի մոտ ծագել է այն ժամանակ, երբ փորձել է ստեղծել իր սեփական բիզնեսը: Հինգ տարի աշխատելով միջազգային կազմակերպությունում՝ մի օր որոշում է կայացրել՝ ժամանակն է ստեղծել մի այնպիսի բիզնես, որն իր բնույթով կլինի յուրահատուկ:

Անի Մկրտչյանը պատմում է, որ հայաստանյան շուկան ուսումնասիրելուց հետո, հասկացել է՝ պետք է ընտրել մի այնպիսի բնագավառ, որը նորություն է շուկայում: Որպես կենսաբան՝ ծանոթ լինելով ակվապոնիկային, փորձել է այն կիրառել նաև մեր երկրում: Ուսումնասիրել է մի շարք երկրների փորձը, որից հետո իր նպատակը կյանքի կոչելու համար, հիմնադրել է «ՄԱկվափոնիկս» (MAquaponics) ընկերությունը:

Ընկերությունը 2014 թվականին դարձել է՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, CRDF Global կազմակերպության և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից կազմակերպված, Գիտական և տեխնոլոգիական ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում իրականացվող «Գաղափարից դեպի շուկա» ամենամյա սթարթափ մրցույթի հաղթողներից մեկը: Անի Մկրտչյանի խոսքերով՝ իրենք Հայաստանում ստեղծել են առաջին կոմերցիոն ակվապոնիկ համակարգը, որը հնարավորություն է ընձեռում արտադրել տարբեր տեսակի բանջարեղեններ, կանաչեղեն և ձուկ: Ներկայացնելով ակվապոնիկայի յուրահատկությունը՝ Անի Մկրտչյանն ասաց, որ այն մթերքի արտադրության գերխնայող մեթոդ է, ջրի կորուստը հասցված է նվազագույնի, անգամ ձկների օրգանիկ կերը աճեցվում է նույն ջրով լցված ավազանի մակերեսին: «Այսինքն՝ արդյունավետությունը բարձր է, իսկ ջրի տարեկան կորուստը կազմում է ընդամենը 7 տոկոս»,- նշել է նա:

Դդմաշենում տեղակայված ջերմոցի տարածքը 1000 մ^2 է: Հետագայում պլանավորում են Դդմաշենը դարձնել էկո և ագրո տուրիստական, ինչպես նաև էկո-կրթական կենտրոն:

Անի Մկրտչյանը հայտնել է, որ ջերմոցում արտադրվող բերքը՝ բանջարեղենը և կանաչին, հիմնականում վաճառում են սրճարաններին ու ռեստորաններին: «Մենք չենք արտադրում այնպիսի մթերք, որը շատ ջերմոցներ արտադրում են: Մեր արտադրանքը յուրահատուկ է, ունենք մշտական գնորդներ: Տարեկան իրացնում ենք շուրջ 20 տոննա բերք, հետագայում նախատեսում ենք ծավալներն ավելացնել: Բույսերը, որոնք դժվարությամբ են աճում դաշտային պայմաններում, մեր ջերմոցում հեշտությամբ ու արագ բերք են տալիս: Ակվապոնիկան թույլ է տալիս ջրի մեծ խնայողությամբ ու բնական հավելումներով օրգանիկ մթերք ստանալ: Մեր արտադրանքի դեպքում՝ սպառման խնդիրը 100 տոկոսով լուծված է»,- ասաց Անի Մկրտչյանը:

Ջերմոցում աշխատում են դդմաշենցիներ, հիմնականում՝ երկու ընտանիք, որոնց աշխատանքը, նվիրվածությունը ընկերության ղեկավարը բարձր է գնահատում: «Նրանք ինձ համար թանկ են, քանի որ այս ամենի մեջ հոգի են դնում: Նրանց նվիրվածության շնորհիվ, այսօր մենք արտադրում ենք բարձրորակ, էկոլոգիապես մաքուր սննդամթերք»,- նշեց Անի Մկրտչյանը՝ հավելելով, որ իր նպատակն է՝ նորարարության միջոցով նպաստել գյուղատնտեսության զարգացմանը: Ըստ նրա՝ այս ուղղությամբ ծրագրերը շատ են, պարզապես ժամանակ է պետք, որպեսզի այդ ամենը կյանքի կոչվի:

Անի Մկրտչյանից հետաքրքվեցինք՝ դժվար չէ Հայաստանում բիզնեսով զբաղվել, այն էլ՝ նորարարությամբ, պատասխանեց. «Կարծում եմ, որ ցանկացած երկրում էլ դժվար է: Ես ապրել եմ տարբեր երկրներում, փորձել եմ ինչ-որ բան անել, բայց Հայաստանը միակ տեղն է, որտեղ ես ինձ լավ եմ զգում: Նախ իմն է, իմ միջավայրն է, այստեղ ավելի կայուն եմ ինձ զգում: Այո, մրցակցության խնդիր կա, բայց եթե նման գործ ձեռնարկեի Նորվեգիայում, երբեք այսքան շուտ արդյունքի չէի հասնի, քանի որ անծանոթ միջավայրում ինչ-որ բան սկսելն արդեն բավականին երկար ժամանակ է պահանջում: Իսկ այստեղ ավելի արագ ստացվեց: Բացի դրանից, կան ծանոթներ, որոնք քեզ օգնում են, ուղղություն են ցույց տալիս»:

Նշենք նաև, որ Անի Մկրտչյանը, զբաղվում է հագուստի, մասնավորապես, գիշերազգեստների արտադրությամբ: Ստեղծել է «Փետուր» ապրանքանիշը, որն այսօր արդեն իսկ մրցունակ է տեղական շուկայում: «Փորձում ենք մեր երկրում լումա ունենալ թեթև արդյունաբերության վերածննդի և զարգացման գործում: Մենք ուզում ենք ցույց տալ, որ հայկական արտադրանքը միշտ չէ, որ թանկ է, և որակով էլ ոչնչով չի զիջում եվրոպականին»,- նշեց նա՝ ավելացնելով, որ իրենց օրինակով ցույց են տալիս՝ հայկական արտադրանք կարելի է ստանալ առանց թուրքականն օգտագործելու: Իսկ «Փետուր»-ի արտադրանքի համար անհրաժեշտ հումքը ներկրվում է Դուբայից և ասիական երկրներից:

Մ. Մարգարյան

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈԼԱՆԴԱՑԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՀԱՅ ՊԱՆՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հոլանդացի փորձագետ Քիս վան Վուխթը (Kees van Vught) վերջերս հայ պանրագործների համար անցկացրեց հատուկ դասընթաց: Լոռու և Գեղարքունիքի մարզերում փորձագետը մասնագիտական դասընթաց է անցկացրել 15 պանրագործների հետ, այցելել նրանց արտադրամասեր, տեղում տրամադրել խորհրդատվություն, ինչպես նաև իրականացրել է Գաուդա և Մոցարելա պանիրների արտադրության փորձ:

Դասընթացի ընթացքում հոլանդացի մասնագետը ցուցադրել է նաև Նիդերլանդներում արտադրված պանրի նմուշները: Դասընթացի ավարտին արտադրողները մասնագետի հետ անցկացրել են պանրի արտադրությանը վերաբերող բաց քննարկում: Դասընթացը և խորհրդատվությունն իրականացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Հոլանդացի ավագ փորձագետների «PUM» կազմակերպության միջև ստորագրված համաձայնագրի շրջանակում՝ ՓՄՁ ԶԱԿ-ի և նրա գործընկերների կողմից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի աջակցությամբ: Դասընթացից առաջ Քիս վան Վուխթը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ում գործադիր տնօրենի տեղակալ, USAID/PRP ծրագրի ղեկավար Սյունիք Թադևոսյանի, ծրագրի տեղական տնտեսական զարգացման բաղադրիչի պատասխանատու Արտակ Դադոյանի, ՓՄՁ ԶԱԿ-ի Սյունիքի մարզի մասնաճյուղի տնօրեն, PUM կազմակերպության հայաստանյան համակարգող Սուրեն Խուդավերդյանի, ՓՄՁ ԶԱԿ-ի միջազգային համագործակցության բաժնի փորձագետ Վիոլետա Վիրաբյանի հետ աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկել էր այցի հետ կապված կազմակերպչական հարցերը, ՓՄՁ

ԶԱԿ-ի աջակցության գործիքները և աջակցության ուղղությունները:

Դեռևս 2016 թ. սեպտեմբերին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Նիդերլանդների ավագ փորձագետների «PUM» ոչ առևտրային կազմակերպության միջև ստորագրվել է Համագործակցության համաձայնագիր, որի հիմնական նպատակն է՝ նպաստել հոլանդացի ավագ փորձագետների փորձի և գիտելիքների տարածմանը Հայաստանում գործող ՓՄՁ-ների շրջանում:

Ծրագրի առաքելությունն է հոլանդացի փորձագետների կողմից կամավորության սկզբունքով, ՓՄՁ-ներին տրամադրել փորձագիտական և տեխնիկական խորհրդատվություն՝ խրախուսելով միջազգային շուկաների հասանելիությանը, ինչպես նաև՝ հայկական ՓՄՁ-ներում միջազգային լավագույն փորձի ներմուծմանը:

www.smednc.am

ԱԳՐՈ Լրատու
Մայիս 5 - 16, 2017 թ.
թիվ 11 (2132)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պարարտանյութերի (հանքային, օրգանական, բակտերիալ) կիրառումը հողի բերրիության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում կարևոր դեր ունի:

Ազոտի դերը: Մշակաբույսերի աճի ու բերքատվության առավել կարևոր տարրն է: Ազոտով, ինչպես նաև ջրով և մյուս անհրաժեշտ սննդատարրերով ապահովված բույսերն առաջացնում են խոշոր, մուգ կանաչ գույնի տերևներ, որոնք կատարում են ակտիվ ֆոտոսինթեզ, առաջացնում լավ աճ և բարձր բերք: Սակայն բույսերի համար վնասակար են ինչպես ազոտի ավելցուկը, այնպես էլ՝ պակասը: Ազոտի ավելցուկի դեպքում բույսերն առաջացնում են բուռն վերգետնյա աճ, սակայն գեներատիվ օրգաններ քիչ են գոյանում, ձգձգվում է բերքի հասունացումը, ընկնում որակը, հատկապես ավելանում է նիտրատների պարունակությունը տերևաբանջարների մոտ: Մշակաբույսերի ազոտով պարարտացման պահանջը ճիշտ որոշելու համար գոյություն ունեն տարբեր մեթոդներ: Դրանցից առավել ճշգրիտը դաշտային պարարտացման փորձն է, որը պահանջում է տևական ժամանակ (2-3 վեգետացիա): Այն ֆերմերների համար ընդունելի մեթոդ չէ: Մյուսը՝ հողի անալիզի մեթոդն է, երբ հողում որոշվում է մատչելի ազոտի պարունակությունը: Ըստ այդմ, 100 գ հողում, մինչև 8 մգ ազոտի պարունակության դեպքում, հողը համարվում է ազոտով թույլ ապահովված և ազոտով պարարտացման մեծ կարիք ունի, 8-12 մգ-ի դեպքում՝ միջակ ապահովված, և ունի պարարտացման միջակ պահանջ, 12 մգ-ից բարձրի դեպքում՝ հողը համարվում է ազոտով լավ ապահովված և այն ազոտով կարելի է չպարարտացնել կամ պարարտացնել ցածր չափաքանակներով: Կարևոր մեթոդ է նաև բույսի հյուսվածքներում սննդատարրերի հանքային ձևերի որոշման մեթոդը, որը հեշտ կիրառելի է և կատարման համար հմտություն չի պահանջում:

Ֆոսֆորի դերը: Առանց ֆոսֆորի որևէ բուսական կամ կենդանական օրգանիզմ գոյություն ունենալ չի կարող: Այն մտնում է բույսի կյանքի համար անփոխարինելի այնպիսի նյութերի բաղադրության մեջ, որոնք մասնակցում են սպիտակուցների սինթեզին, բույսերի աճին, բազմացմանը, ժառանգական հատկությունների փոխանցմանը, մարդկանց և կենդանիների նյարդային համակարգի բնականոն գործունեությանը:

Ֆոսֆորով ապահովված բույսերը լավ են աճում, ավելանում են արմատների կլանող հատկությունները, շուրջ 30 %-ով նվազում է միավոր բերքի ստացման համար ծախսված ջրի քանակը, որը կարևոր է հանրապետության անջրդի /չորային/ երկրագործության համար: Այս առումով, ֆոսֆորի պահանջը մեծ է այն մշակաբույսերի մոտ, որոնց բերքում կուտակված են շաքարներ (խաղողի վազ, պտղատու ծառեր, բանջարային մշակաբույսեր, ծխախոտ, հացահատիկ): Ֆոսֆորը նպաստում է վաղ բերքի ստացմանը, որի իրացումից ավելանում է ֆերմերի շահույթը: Այն կարևոր է նաև ուշահաս սորտերի և կարճ վեգետացիայի գոտիների համար: Ֆոսֆորով բավարար սնման դեպքում, մշակաբույսերը սնկային հիվանդություններից թույլ են վնասվում, նվազում է հացահատիկային մշակաբույսերի արմատային փտումը:

Ֆոսֆորի պահանջը որոշվում է դաշտային պարարտացման փորձի, հողի քիմիական անալիզի, բույսի հյուսվածքներում հանքային ֆոսֆորի պարունակությունը գնահատելու միջոցով: Բանջարային, պտղատու մշակաբույսերն ու խաղողի վազը, ի տարբերություն հացահատիկային մշակաբույսերի, վեգետացիայի ամբողջ ընթացքում զգում են ֆոսֆորի պահանջ, ուստի, այդ մշակաբույսերի ֆոսֆորով պարարտացումը պետք է կատարել՝ հաշվի առնելով նշված հանգամանքը:

Այդ նպատակով բանջարային մշակաբույսերի համար պահանջվող ֆոսֆորական պարարտանյութերի (նաև՝ օրգանական) ամբողջ քանակը հարկ է կիրառել սածիլումից առաջ, հողը նախապատրաստելիս, իսկ պտղատու և խաղողի այգիներում ամբողջությամբ գարնանը՝ միջշարային տարածությունները մշակելու ժամանակ՝ ակոսային կամ բնային եղանակով, կամ մի մասը տրվում է սնուցման ձևով՝ պտուղների կազմակերպման ու բուռն աճի ընթացքում: Ֆոսֆորական պարարտանյութերի կիրառման ժամկետները որոշելիս, պետք է նկատի ունենալ, որ դրանք հողում չեն տեղաշարժվում:

Կալիումի դերը: Այն նպաստում է ֆոտոսինթեզի արդյունավետության բարձրացմանը, ածխաջրերի սինթեզին, փոխակերպմանն ու տեղաշարժմանը տերևներից բերքի մեջ կամ պահեստային օրգաններ:

Կալիումը նպաստում է սպիտակուցների սինթեզին, խթանում մերիստեմային բջիջների աճը, կարգավորում ջրային ռեժիմը, բույսերը դիմանում են ժամանակավոր չորությանը:

Կալիումի դերը հատկապես մեծ է աշնանացան հացաբույսերի ձմռադիմացկունության բարձրացման գործում, խիստ կարևոր է խաղողի վազի և բազմամյա տնկարկների միամյա շիվերի փայտացման համար:

Կալիումի պակասից տերևները կնճռոտվում են, նվազում է դիմացկունությունը սնկային հիվանդությունների և ցրտերի նկատմամբ: Ինչպես այլ սննդատարրերի դեպքում, մշակաբույսերում կալիումի պահանջը ևս որոշվում է դաշտային պարարտացման փորձի, հողի կամ բույսի քիմիական անալիզով:

Երկաթի դերը: Երկաթը բույսերի սննդառության համար անփոխարինելի տարր է: Բավական է միայն նշել, որ բույսի տերևներում քլորոֆիլի սինթեզն ու կենսական շատ գործընթացներ կատարվում են երկաթ պարունակող ֆերմենտների մասնակցությամբ: Երբ բույսերը երկաթի բավարար քանակով են սնվել, տերևները լինում են խոշոր և մուգ կանաչ գույնի, տալիս են լավ աճ և բարձր բերք: Շատ հաճախ մշակաբույսերի երկաթով սննդառությունը խախտվում է: Քանի որ հանրապետության հողերը հիմնային են, այդ պայմաններում առաջանում են բույսերին երկաթի դժվար մատչելի միացություններ:

Այդ երևույթը մշակաբույսերի վրա նկատվում է տերևների դեղնությամբ (քլորոզով), որն առաջին հերթին նկատվում է առավել երկրորդ տերևի վրա: Ընդ որում, որքան երկաթի պակասը մեծանում է, այնքան ուժեղանում է բույսի սաղարթի դեղնությունը: Երկաթի պակասից առաջացող քլորոզը հատկապես նկատվում է պտղատու և խաղողի այգիներում: Բազմամյա տնկարկներում, քլորոզի պարբերաբար կրկնման դեպքում, բույսի աճն ու բերքատվությունն էապես նվազում են, կարող է սաղարթը հետագայում չորանալ, իսկ այգու մշակությունը դառնալ ոչ արդյունավետ:

Գիտնականների կողմից առաջարկվել են երկաթի համալիր միացություններ, այդ թվում՝ դիէթիլեն եռամին հինգ քացախաթթվի երկաթի համալիրը, կոմպլեքսոնը և այլն:

Նշված միացությունները կիրառվում են հող մտցնելով և արտաարմատային սնուցմամբ՝ 0.2-0.3 % ջրային լուծույթով: Պարարտանյութերի արդյունավետությունը բարձրացնելու համար, ցանկալի է դրանք կիրառել, քանի դեռ դեղնության նշաններ չեն երևացել կամ՝ նոր են սկսում երևալ: Խորհուրդ է տրվում արտարմատային սնուցումը կատարել օրվա զով ժամերին՝ առանձին կամ համատեղելով բուժանյութերի կամ հերբիցիդների կիրառման հետ:

Օրգանական պարարտանյութերի դերը:

Օրգանական պարարտանյութերը (գոմաղբ, թռչնաղբ, կենսահումուս, տորֆ, կոմպոստ) պարունակում են բույսերին անհրաժեշտ բազմաթիվ սննդատարրեր: Դրանց կենսաբանական քայքայումից անջատվում է ածխաթթու գազ, որն անհրաժեշտ է ֆոտոսինթեզի համար: Գոյանում են հումուսային նյութեր, և հողում հումուսի քանակն ավելանում է, ինչը նպաստում է հողի խոնավունակության, ծակոտկենության, օգտակար միկրոօրգանիզմների գործունեության բարելավմանը: Անհրաժեշտ է կիրառել միայն հասունացած գոմաղբ, որում արդեն ոչնչացել են մոլախոտերի սերմերի մեծ մասը, իսկ սննդատարրերը վերածվել են բույսերին մատչելի ձևերի: Ակնհայտ է, որ այդ պարարտանյութերի դերը մեծ է հատկապես օրգանական գյուղատնտեսությունն իրականացնելիս: Գոմաղբի կիրառման չափաքանակները, կախված հողի հատկությունից, մշակաբույսից և ֆերմերի տնտեսական հնարավորությունից, կարող են տատանվել 20-60 տ/հա և ավելի:

Հացահատիկային մշակաբույսերի համար նպատակահարմար է կիրառել 20-30 տ/հա, բանջարային մշակաբույսերի համար՝ 30-40 տ/հա, պտղատու և խաղողի այգիների համար՝ 40-60 տ/հա: Խիստ ծանր կամ նկատելի թեթև մեխանիկական կազմով հողերում և նոր մելիորացված հողերում կարելի է կիրառել գոմաղբի ավելի բարձր չափաքանակներ՝ 60-80 տ/հա: Գոմաղբի կիրառման լավագույն ժամկետը համընկնում է հողի հիմնական մշակությանը՝ աշնանը կամ վաղ գարնանը:

Կենսահումուսը և թռչնաղբը սննդատարրերով ավելի հարուստ են և կիրառվում են առավել պակաս չափաքանակներով՝ 1-10 տ/հա և ավելի: Կենսահումուսը կիրառելի է ցանքից (տնկումից) առաջ և ցանքից հետո, նաև սնուցման ձևով, իսկ թռչնաղբը՝ ցանքից առաջ և սնուցման ձևով: Տորֆը, կենսահումուսն և հասուն գոմաղբը մեծ կիրառություն ունեն նաև ջերմոցներում և ջերմատներում՝ հողախառնուրդ պատրաստելու համար:

Բակտերիական պարարտանյութերի դերը

Այս պարարտանյութերի կիրառման նպատակն է՝ հողը հարստացնել այնպիսի բակտերիաներով, որոնք նպաստավոր պայմաններում, մշակաբույսերի արմատային համակարգի շրջակայքում բազմանում են և իրենց գործունեությամբ օդի մոլեկուլային ազոտի հաշվին, հողը հարստացնում կենսաբանական ազոտով, ինչը հատկապես կարևորվում է օրգանական գյուղատնտեսության ժամանակ: Դրանք կիրառվում են սերմերը պարարտանյութի լուծույթով թրջելով ջրման հետ կամ արտաարմատային սնուցմամբ:

Կարևոր է իմանալ, որ բակտերիական պարարտանյութերը, վեգետացիայի ընթացքում, 25-30 օրը մեկ կիրառելու դեպքում, հնարավոր է կանխել սնկային հիվանդությունների զարգացումը:

Սերգեյ Երիցյան
ՀԱԱՀ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՇԽԱՐՀ

ԻՆՉՈՒ ԱՐԺԵ ԱՎԵԼԻ ՀԱՃԱԽ ՁԻԹԱՊՏՈՒՂ ՈՒՏԵԼ

Սննդակարգում ձիթապտուղը կարևոր մթերք է, որը ամենօրյա սննդում պետք է ներառեն բոլոր նրանք, ովքեր ուզում են լինել առողջ և երկար ապրել: Ինչ առանձնահատուկ բան կա ձիթապտղի մեջ:

Ձիթապտուղը մեծ քանակությամբ օրգանիզմին անհրաժեշտ վիտամիններ և բարձրորակ բուսական ճարպեր է պարունակում: Ձիթապտղում պարունակվող նյութերն ամրացնում են բջջային թաղանթը և լորձաթաղանթը, բարենպաստ են ազդում ստամոքսի, ենթաստամոքսային գեղձի, լյարդի աշխատանքի վրա: Ձիթապտուղը նվազեցնում է սրտանոթային հիվանդությունների զարգացման ռիսկը, որովհետև նվազեցնում է արյան ճնշումն ու «վատ» LDL խոլեստերինի մակարդակը: Իր հակաբորբոքային հատկությունների շնորհիվ, ձիթապտուղը կարող է նվազեցնել ցավային զգացողությունները, նպաստել վերքերի առողջացմանը, օրգանիզմը մաքրել շլակներից և թունանյութերից: Ձիթապտղում և ձիթապտղի յուղում պարունակվող մոնոչհագեցած ճարպային թթուներն (ստեարինային, օլեինային, պալմիտինային) ի վիճակի են դանդաղեցնել ծերացման գործընթացները, բարելավել մաշկի, մազերի և եղունգների վիճակը: Հակաօքսիդանտների և օգտակար ճարպերի համադրումը ձիթապտղի յուղը դարձնում է կաթնագեղձի քաղցկեղի, աղիների և մաշկի ուռուցքների զարգացմանը խոչընդոտող միջոց: Հիշեցնենք, որ ձիթապտուղը և առաջին քամվածքի ձիթապտղի յուղը միջերկրածովյան սննդակարգի գլխավոր բաղադրիչներն են, որը, հայտնի է, օգնում է նվազեցնել Ալցհայմերի հիվանդության և ուռուցքային հիվանդությունների զարգացման ռիսկը:

Ձիթապտղի պտղամիսը պարունակում է շաքար, խիստ արժեքավոր սպիտակուցներ, «C» և «B» խմբի վիտամիններ, կարոտին, կալիում, կալցիում և գլիկոզիդներ:

Որպես դիետիկ սնունդ՝ ավելի ցուցված է սև ձիթապտուղը: Իսկ ամեն ամիս 20 ձիթապտուղ ուտելու դեպքում լիովին հնարավոր է խուսափել ատամնաքարի առաջացումից, ինչպես նաև միզուղիներում, լեղապարկում և երիկամներում քարերի առաջացումից: Ձիթապտղի յուղն օրգանիզմի կողմից 98 %-ով յուրացվում է և ունի ընդհանուր կազդուրիչ ազդեցություն: Ձիթապտղի յուղի բաղադրության մեջ մտնող մոնոչհագեցած յուղային թթուներն օժտված են օրգանիզմում խոլեստերինի մակարդակն իջեցնելու և վաղաժամ ծերացման գործընթացները կանխելու հատկությամբ:

Ձիթապտղի յուղի օգտագործումը բարելավում է լեղուղիների աշխատանքը, վերացնում փորկապությունը և վերականգնում ստամոքսի լորձաթաղանթը:

Ձիթապտուղը ոչ միայն յուրահատուկ համ ու հոտ ունի, այլև շատ օգտակար է: Հնում ձիթապտուղ կիրառվել է վերքերի ապաքինման ու օրգանիզմի վնասակար նյութերից ազատվելու համար: Այս նպատակով խորհուրդ է տրվում օրական մի քանի պտուղ կուլ տալ՝ կորիզներով: Ձիթապտուղն օգտակար է նաև տարեց մարդկանց համար, քանի որ ամրացնում է ոսկրային համակարգը, լավացնում լյարդի աշխատանքը:

Ձիթապտղի պտղամիսը պարունակում է շաքար, խիստ արժեքավոր սպիտակուցներ, «C» և «B» խմբի վիտամիններ, կարոտին, կալիում, կալցիում և գլիկոզիդներ: Մասնագետների կարծիքով՝ սննդակարգում պարբերաբար ձիթապտուղ օգտագործելու դեպքում հնարավոր է կանխել ստամոքսի խոցի առաջացումը: Ձիթապտղի յուղի օգտագործումը բարելավում է լեղուղիների աշխատանքը, վերացնում փորկապությունը և վերականգնում ստամոքսի լորձաթաղանթը:

Լիլիթ Գասպարյան

ԳԱԶԱՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես պաշտոնական, այնպես էլ ժողովրդական բժշկությունը գազարն օգտագործում է որպես թուլացած օրգանիզմի ուժերը վերականգնելու միջոց, այն լրացնում է վիտամին A-ի պակասը: Գազարի

ամենակարևոր ակտիվ նյութը՝ դա կարոտինն է: Այն միանալով ճարպին առաջացնում է ռետինոլ, որն անհրաժեշտ է լավ տեսողություն և գեղեցիկ մաշկ ունենալու համար: Այդ պատճառով գազար պարունակող աղցաններին պետք է ավելացնել բուսական յուղ, մայոնեզ, թթվասեր: Գազարը կարելի է օգտագործել նաև որպես որդամուղ միջոց, որի դեպքում անհրաժեշտ է 1-2 օրվա ընթացքում խմել գազարի հյութ: Կարելի է խմել գազարի հյութով թեյ կամ պարզապես գազարի հյութ՝ որպես հանգստացնող միջոց: Ցանկալի է այն շատ օգտագործել ձմռանը ուժերը վերականգնելու, վիտամինների պակասը լրացնելու նպատակով: Օգտագործվում է նաև մաշկի հիվանդությունները բուժելու համար: Այս հիանալի նարնջագույն բանջարեղենը կա գրեթե յուրաքանչյուրիս սառնարանում: Մենք սովոր ենք այն ուտել ամեն օր: Սակայն գիտենք արդյոք օրգանիզմին գազարի բերած հսկայական օգուտի մասին: Գազարի այս անհայտ օգտակար հատկությունները ներկայացնում ենք ստորև.

Գազարի օգտակար հատկությունները

Գազարը կանխարգելում է քաղցկեղի առաջացումը: Գազարի օգտագործումը նվազեցնում է թոքերի, կաթնագեղձի ու հաստ աղիքի քաղցկեղի առաջացման ռիսկը: Գիտնականները հայտնաբերել են նոր նյութեր՝ ֆալկարինոլ ու ֆալկարինոլին, որոնք օգնում են կանխարգելել քաղցկեղածին գոյացությունները: Գազարը դանդաղեցնում է ծերացման պրոցեսը: Բանջարեղենի մեջ պարունակվում է հզոր հակաօքսիդանտ՝ բետա կարոտին: Այն կանխարգելում է բջիջների ծերացումը:

Հակաօքսիդանտներն ու վիտամին A-ն օգնում են պաշտպանել օրգանիզմը ուլտրամանուշակագույն ճառագայթներից: Վիտամին A-ն կանխարգելում է ժամանակից շուտ առաջացած կնճիռները, չորությունը, ցանը, պիգմենտային բծերն ու մաշկի խամրած գույնը: Գազարը բնական հակասեպտիկ է: Կարող է կանխարգելել վարակների տարածումը: Գազարը օգնում է կանխարգելել սրտանոթային հիվանդություններն ու մաքրել օրգանիզմը: Այն ատամներն ու լնդերը առողջ է պահում:

Օրվա խորհուրդը

ԲԱՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Բարի ավանդույթներին ու իր կոչմանը հավատարիմ՝ ՀԱԱՀ –ի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն Ալեքսանդր Հակոբյանը շարունակում է ծառատնկման հանդիսավոր միջոցառումների շարքը:

Դրանք կապվում են մեր ժողովրդի պատմության հիշարժան տարեթվերի հետ: Օրերս մասնաճյուղի ուսանողները ուսումնական մասնաշենքի բակում արևմտյան սյունաձև թույա տնկեցին՝ ի հիշատակ 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի:

Հերթական տարեթիվը մայիսի 9- ն էր՝ Մեծ հայրենականում հաղթանակի, Շուշիի ազատագրման և Արցախի Պաշտպանության բանակի ստեղծման օրը: Անչափելի մեծ է օրվա խորհուրդը. հաղթանակ երկրորդ աշխարհամարտում, վերածնված հաղթանակ Արցախի հողում և այդ հաղթանակները կերտող բանակի ստեղծում: Եվ կրկին ավանդույթը չխախտվեց. ՀԱԱՀ –ի Վանաձորի մասնաճյուղի հանրույթի կողմից, ուսումնական մասնաշենքի բակում, արեւմտյան սյունաձև թույա տնկվեց Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի՝ 72 և Շուշիի ազատագրման 25 – ամյակների առթիվ:

«Տարիների հետ ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղը նոր էջեր կգրի Լոռու մարզի և Հայաստանի կենսագրության մեջ, իսկ տնկված ծառերն իրենց բարձր հասակով կլինեն դրա խոսուն վկաները»,- նշում է Ա. Հակոբյանը:

ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրատներում:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2017 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
- Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները
- «Հայփոստ»,
- «Հայմամուլ»,
- «Պրեսս-Առտաշեն»

կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 35
ստորագրված է տպագրության 15.05.2017 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա